

ԶԱՐՏՈՆԻՔ -ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝

www.zartonkdaily.com

հնչաբե նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեան հետեւեալ հասցեներուն՝

e-mail: zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

ԶԱՐՏՈՆԻՔ

Հարցազրույց

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN

Հարցազրույց, 13 Օգոստոս 2015

77րդ Տարի, թիւ 175 (21,416)

Հինգ ԳԵՐԵՒԻՆ, 13 ՕԳՈՍՏՈՍ 2015

4 էջ 1000 L.N.

1915-2015 Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարեկից

I Remember and Demand

Je me souviens et j'exige

أتأذكّر وأطالب

«Հիւլէական Ուժանիւթի Թղթածրարի Լուծումը Դուռ Բացած Ե Երջանային Պետութիւններուն Միջեւ Զամագործակցութեան Խորացման».



Նախարար Պասիլ իր կարգին յայտարարեց, որ Լիբանան ու Իրան դեմ կանգնած են ահաբեկչութեան՝ նոյն խրամատին մէջ: Իր կեցութեան վայրին մէջ Զարիֆ տեսակցեցաւ պաշտպանութեան նախարար Սամիր Մուքպիլի հետ: Վերջինս հաստատեց, որ իրենք ընտանեակ են լիբանանեան շահերուն ի նկատմամբ ծառայող շարք մը նիւթեր, սակայն դիտել տուաւ, որ բանական իրանեան զինուորական օգնութիւններ տրամադրելու հարցը չէ ընտանեակ: Իրանի նախարարը Պարսկաստանի թղթածրարը ներքին լիբանանեան հարց Ե եւ պետք է տեղական ջանքերով լուծուի: Պարսկաստանը, որ հիւլէական համաձայնութեան ստորագրութեան Յուլիս 14ի թուականը կը համարուի անկիւնադարձ մը եւ այդ պիտի բարելաւ շրջանային կացութիւնը:

Իրանի արտաքին գործոց նախարար Սուհամատ Ժաուատ Զարիֆ այցելեց Լիբանան: Ան տեսակցութիւններ ունեցաւ բարձրաստիճան անձնակազմի անդամներու հետ, ընտանեակ շրջանային հարցերն ու երկկողմանի յարաբերութիւնները: «Հիւլէական ուժանիւթի թղթածրարի լուծումը դուռ բացած Ե շրջանային պետութիւններուն միջեւ համագործակցութեան խորացման» պայմանաւ, որ այդ պետութիւնները երկխօսութեան միջոցով իրագործեն իրենց միացեալ նպատակները», այսպէս յայտարարեց Իրանի Արտաքին գործոց նախարար Սուհամատ Ժաուատ Զարիֆ, տեսակցելէ ետք Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի հետ: Զարիֆ մամլոյ ասուլիս մը տուաւ իր լիբանանցի պաշտօնակից ժըպարան Պասիլի հետ եւ նշեց, որ Թեհրան համագործակցութեան ձեռք կ'երկարէ շրջանի բոլոր կողմերուն: Ան նաեւ վերահաստատեց, որ Իրան պիտի կանգնի դիմադրութեան կողքին, սակայն միջամուխ չի դառնար Լիբանանի ներքին հարցերուն: Սուհամատ Զարիֆի այցելուելու ընթացքին Լիբանանի նախագահ Նեպիի Պրորիի կը ըստէր, որ Զարիֆի իրեն ըսած է, որ Թեհրան յանձնառու կը մնայ Լիբանանին եւ անոր օգնութիւններ կը տրամադրէ, սակայն երկրին ներքին հարցերուն միջամուխ չի դառնար: Զարիֆի հետ Պրորիի ընտանեակ Ե նաեւ հիւլէական համաձայնութիւնն ու անոր յաջորդած հանգումները: Իրանի նախարարը Պրորիիին տեսակցութեան թղթածրարը ներքին լիբանանեան հարց Ե եւ պետք է տեղական ջանքերով լուծուի: Պրորիի նշեց, որ հիւլէական համաձայնութեան ստորագրութեան Յուլիս 14ի թուականը կը համարուի անկիւնադարձ մը եւ այդ պիտի բարելաւ շրջանային կացութիւնը:

Վարչապետ Թամմամ Սալամ Ամմանի մէջ

Վարչապետ Թամմամ Սալամ այցելեց Ամման, ուրկէ յայտարարեց, որ արաբական շրջանը ակնատես կը դառնայ դժուար կացութեան, որ կը վտանգէ երկրիներու միասնականութիւնը եւ շրջանի ընդհանուր անվտանգութիւնը: Այս գարգացումները Յորդանանն ու Լիբանանը կը տեղադրեն երկու գլխաւոր խնդիրներու՝ գաղթականներու հարցի եւ ահաբեկչական կազմակերպութիւններու վտանգի դիմաց, ըսաւ Վարչապետը: Ան նաեւ նշեց, որ զինեալ կազմակերպութիւնները սպառնալիքներ կը կատարեն, անտեսելով բոլոր կանոնները եւ կրօնական արժեքները: Լիբանան-Յորդանանեան Գերագոյն խորհուրդի իրենց թակաստանի խնդիրներուն համաձայնեցնելու ընթացքին, իր արտասանած խօսքին մէջ Վարչապետը նշեց, որ ծայրայեղական կազմակերպութիւններու դեմ պետք է դնել ինչպէս ուղղակի ապահովական միջոցներով, նոյնպէս ալ չափաւորականութեամբ: Այս երեւոյթին դեմ պայքարելու լաւագոյն միջոցներէն մէկը աղջատութիւնը ոչնչացնելն է, որովհետեւ տգիտութիւնն ու աղքատութիւնը տարբեր շրջաններու մէջ կը ծառայեն ծայրայեղական գաղափարներու տարածումին, ըսաւ Վարչապետ Սալամ: Ան նաեւ կոչ ուղղեց գարգացնելու Յորդանանի եւ Լիբանանի երկկողմանի յարաբերութիւններն ու կապերը, մասնաւորաբար տնտեսական ոլորտին մէջ:

Տարին դեմ Աուսի արձակած յարձակումին համար: Ընդհանուր քարտուղարութիւնը դատապարտեց Պալապէի մօտ հոգեւորականներու ճամբան խռչնդոտելու քայլը: Ան կոչ ուղղեց բացայայտելու եւ պատժելու յանցագործները: 14 Մարտի ուժերը նաեւ դատապարտեցին Իրանի արտաքին գործոց նախարարին տեսակցութիւնը՝ Սուրիոյ կառավարութեան զօրակցող պաղեստինեան կարգ մը կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Երկրին Նոր Նախագահ Ընտրելու Խորհրդարանական Նիստը Դարձեալ Չկայացաւ

Խորհրդարանի մէջ երէկ չկայացաւ Նոր Նախագահի ընտրութեան հերթական նիստը: Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի ճշդեց նիստի նոր թուական մը՝ նկատի առնելով, որ երեսփոխաններու բաւարար թիւ չկար խորհրդարանի դահլիճին մէջ: Նիստի յետաձգումէն ետք մամլոյ ասուլիս մը տուաւ երեսփոխան Ռոպէր Ֆատուլ, որ նշեց, թէ միջազգային կազմակերպութիւններուն պետք է կոչ ուղղուի՝ բազմացնելու Լիբանանի տրամադրուած օգնութիւնները: Ան նաեւ միջազգային ընտանեակի պահանջեց Լիբանանը գերծ պահել շրջանի հակամարտութիւններէն, որովհետեւ Լիբանանն ու լիբանանցիները չեն կրնար լուծել շրջանի բոլոր հակամարտութիւնները:

Սամիր Ժաուատ Կը Դատապարտէ Զոգեւորականներուն Դեմ Գործադրուածը

Լիբանանեան Ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր Ժաուատ, ժողովրդային ընթրիքի մը ընթացքին դատապարտեց՝ Զաննա Ալուան եպիսկոպոսին եւ հայր Էլի Նասրիի դեմ գործադրուած խռչնդոտման դէպքը հիւսիսային Պեքայի մէջ: Կուսակցութեան հիւսիսային Պեքայի շրջանի մասնաճիւղերուն ներկայացուցիչներ ընդունած ատեն, ընթրիքի սեղանին շուրջ ժառանգ դիտել տուաւ, որ այն տրամաբանութիւնը, ըստ որուն քրիստոնեաները պիտի ճշուէին՝ եթէ Զոգեպալլա չպաշտպանէր Զաննա Ալուանի պիտի անցնէր Իսլամական պետութիւն կազմակերպութեան տիրապետութեան տակ տրամաբանութիւնը դարձեալ գործադրելի չէ: Անոր համաձայն անհրաժեշտ է ամրապնդել ներքին կայունութիւնը եւ անվտանգութիւնը:

Պուրճ Զամմուտի մէջ Զրոյէ

Երախայ մը գոհուցեցաւ եւ ուրիշներ վիրաւորուեցան, երբ Պուրճ Զամմուտի մէջ մեծ հրդեհ մը ծագեցաւ երէկ, Մետրոպոլիսէն վարժարանի եւ կամուրջի միջեւ գտնուող հատուածին շէնքերէն մէկուն մէջ: Տեսագրութիւնները ցոյց տուին, որ գլխաւոր հրդեհը պատահած է շէնքի վերջին յարկին մէջ, սակայն բոցերը տարածուած են նաեւ այլ յարկերը: Զարգացողական անվտանգութեան միաւորները նշեցին, որ հրդեհի վայրէջքը փոխադրուած է երախայի մը դիակը, նաեւ հիւանդանոց փոխադրուած են առնուակ 5 վիրաւորներ:

Աուսականները Դարձեալ Փողոց Իջան

Ապահովական ուժեր երէկ օրուան ընթացքին Պեյրութի կերպարական հատուածին, ինչպէս նաեւ պետական հաստատութիւններու եւ կառոյցներու մօտ ամրապնդեցին իրենց ներկայութիւնը, առ ի նախապատրաստութիւն Աուսի կողմնակիցներու կատարելիք բողոքի ցոյցերուն: Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն զօր. Իպրահիմ Պասպուս մինչ այդ նշեց, որ ձեռնարկուած քայլերը սովորական են եւ ստեղծուած կացութեան յարմար: Ան նաեւ նշեց, որ իրենց գլխաւոր նպատակը ցուցարարներու անվտանգութիւնը պաշտպանելն է, նաեւ պետական հաստատութիւններու անվտանգութիւնը ապահովելը: Մինչ այդ երեսփոխան Իպրահիմ Զընսան նշեց, որ իրենց գլխաւոր նպատակը քրիստոնեայ հզօրագոյն պլոքի դիրքորոշումը անտեսելուն դեմ ձայն բարձրացնելն է: Նշեց, որ խոստացուած շարժումը սկսաւ ուշ յետմիջօրէին՝ երբ Աուսի համակիրներ համախմբուելով գանգաւ շրջաններու մէջ, ինքնաշարժներով ուղղուեցան Պեյրութի կերպարական հրապարակ, իրենց պահանջները լսելի դարձնելու կառավարութեան:

14 Մարտի Ուժերը Դատապարտեցին

14 Մարտի քաղաքական ուժերու ընդհանուր քարտուղարութիւնը գումարեց իր հերթական նիստը, որու ընթացքին ընտրուեցան Լիբանանեան եւ շրջանային ընդհանուր իրադարձութիւնները, ինչպէս նաեւ աղբերու թղթածրարը եւ երեսփոխան Միշել Աուսի վերջին սպառնալիքները: Ընդհանուր քարտուղարութիւնը գարմանք յայտնեց բանակի ընդհանուր հրամանատարին:

Երջանային Լուրեր

Յրգայալլա եւ Ահրար Ալ Շամ 48 Ժամուան Զինադադար Կը Ծռնեն

Քանի մը շաբաթ տեւած զինեալ ծանր բախումներէ ետք, Յրգայալլան եւ սուրիական ընդդիմադիր Ահրար Ալ Շամ կազմակերպութիւնը համաձայնեցան Զապատանիի, ինչպէս նաեւ Իսլիպի մօտակայքի երկու գիւղերու մէջ 48 ժամուան զինադադար յայտարարելու: Միւս կողմէ Դամասկոսի մօտակայ արեւելեան Ղուբա շրջանի մէջ անելի քան 30 անձեր սպանուեցան եւ 120 ուրիշներ վիրաւորուեցան, երբ օդային եւ հրթիռային յարձակումներու ենթարկուեցաւ այդ շրջանը: Այլ գծով Մարդկային իրաւունքներու սուրիական խորհուրդը յայտարարեց, որ առնուակն քանի մը անձեր սպանուած են Տեր Զօրի մէջ տեղի ունեցած բախումներու ընթացքին, երբ Տաշէ կը փորձէր ներխուժել Տեր Զօրի մէջ Սուրիոյ կառավարութեան տիրապետութեան տակ գտնուող ժուրա թաղամասը: Իսկ Յալէպի գիւղական շրջաններուն մէջ մարտերը շարունակուեցան:

Ուաշինկթըն Կը Յերքէ Ապահովական Գօտի Զաստատելու Զամաձայնութիւնը

Մինչ Թուրքիա կը նշէր, որ Միացեալ Նահանգներու հետ համաձայնութեան հասած է՝ Սուրիոյ հիւսիսային սահմանային հատուածին մօտ ապահով գօտի մը հաստատելու շուրջ, Ուաշինկթընը հերքեց թրքական տեղեկութիւնները եւ իր պետական քարտուղարութեան միջոցաւ պնդեց, որ Անկարայի հետ համաձայնութիւնը պարզապէս կը վերաբերի՝ Սուրիոյ հիւսիսային հատուածին մէջ Իսլամական պետութիւն կազմակերպութեան դեմ յարձակումները բազմացնելուն: Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բաւերը նշած էր, որ ամերիկացիներուն հետ իրենց համաձայնութիւնը կը ներառէ՝ Սուրիոյ հիւսիսային հատուածին մէջ 95 քմ. երկայնքով եւ 45 քմ. լայնքով ապահով գօտիի մը հաստատումը, որուն սահմանները մուտք գործող քիւրտերը եւ Իսլամական պետութիւն կազմակերպութեան զինեալները կ'ենթարկուին յարձակումի: Սուրիական կարգ մը կազմակերպութիւններ նախապէս զօրակցած էին ապահով գօտիի առաջարկին:

Յայրենի Լուրեր

Օհանեան Այցելեց Մուսա Լերան Յուշահամալիր

Մուսա Լերան հերոսամարտի 100 ամեակին ընդառաջ՝ հերոսամարտի մասնակիցներուն անկողորմ կամքը, ազատագրական ոգին եւ արիւթիւնը խորհրդանշող յուշահամալիրի տարածքին մէջ սկսած են շինարարական եւ բարեկարգման լայնածաւալ աշխատանքները:

Յուշարձանի եւ հերոսամարտի պատմութիւնը ներկայացնող թանգարանի շինարարութեան կապակած հարցերուն եւ մասնաւորապէս ինքնին, արդիականացման աշխատանքներու ընթացքին տեղւոյն վրայ ծանօթանալու նպատակով, երէկ Մուսա Լերան յուշահամալիր այցելեց պաշտպանութեան նախարար Մեյրան Օհանեան՝ նախարարի առաջին տեղակալ Դաւիթ Տօնոյեանի, բարձրաստիճան այլ պաշտօնատարներու եւ զինուորականներու ընկերակցութեամբ:


Ընտանեակներու տարածքին բարեկարգման կապուած առաջարկներն ու դիտարկումները, աշխատանքներու կատարման յաջողականութիւնն ու ժամանակացոյցը, Օհանեան անձնակազմին տուաւ յանձնարարականներ՝ նշուած ժամկետներուն մէջ աշխատանքները աւարտին հասցնելու նպատակով:



Փերմեաքով Ընդունած Ե իր Մեղքը Բայց Զրաժարած Ե Յուցմունք Տալէ

Գիւմրիի մէջ երէկ՝ Օգոստոս 12ին, մեկարկած է 102րդ ռուսական ռազմականային զինծառայող Վալէրի Փերմեաքովի նկատմամբ քրեական գործով բաց դատական նիստը: Այս մասին կը յայտնէ PanARMENIAN.Net:

Փերմեաքովի նկատմամբ քրեական գործ յարուցած է նաեւ հայկական կողմը՝ 33 քրեական օրէսագիրքի 104րդ յօդուածի 2րդ մասի 1ին կետով (երկու եւ անելի անձանց սպանութիւն): Զայկական դատական ատենանքը կը զբաղին արդէն Աւետիսեաններու սպանութեան գործով: Այդ գործով նախքան նիստին դեռ չէ աւարտած, դատական նիստի ժամկետները դեռ յայտնի չեն:



Նախագահող դատաւոր Ալեքսանդր Շելտեան տեղեկացուցած է ամբաստանեալին, ինչպէս նաեւ կողմերուն իրենց իրաւունքներուն մասին: Փերմեաքովը դատարանի դահլիճին մէջ մեկուսացուած է ապակեպատ «պատնէշով»:

Մեղադրեալը ընդունած է դատաւորութեան եւ ապօրինի զենք-զինամթերք կրելու գծով ներկայացուած մեղադրանքները: Դատարանը հարցուցած է. «Դուք ձեզի մեղաւոր կը համարե՞ք, ճիշդ են ներկայացուած ցուցմունքները»: Մեղադրեալը ըսած է. «Այո, ես ամեն ինչ կը հաստատեմ»: Միաժամանակ Փերմեաքով հրաժարած է ցուցմունք տալ եւ հաստատել նախկին ցուցմունքը, որ տուած է նախաքննութեան ընթացքին, երբ ան ինքզինքը ամբողջութեամբ մեղաւոր ճանչցած է:

Ըստ Փերմեաքովի ցուցմունքին, ան Աւետիսեաններու տան մէջ մտնած է 10-15 վայրկեան, տեղին ծանօթ չէ եղած: Չին-ծառայողը ուզած է անցնիլ հայ-թրքական սահմանը, սակայն սահմանապահները ձերբակալած են զինք: Ըստ տղաբոլորական, «Փերմեաքով յայտարարած է, որ սկիզբը սպաննելու մտադրութիւն չէ ունեցած, այլ ուղղակի վախցնելու համար օղջ կրակած է»: Աւետիսեաններու տունէն ան կ'ուզէր միայն դրամ գողնալ, իսկ մէկ այլ տունէ հագուստ՝ Թուրքիա, յետոյ Ռուսաստան հեռանալու նպատակով: Ինքնաձիգը վերցուցած է, որպէսզի շուները ջշէ, յետագային մտադիր եղած է վաճառել զենքը: Պատահական տուն մտած է, մարդիկ քնացած էղած են, բայց արթնցած են: Ան վախցած է սպաննած է անոնց, ձգած ամեն ինչ է փախած: Փերմեաքով ըսած է, որ կ'ուզէր ընդհանրապէս խուսափիլ զինուորական ծառայութենէ: Ան ըսած է, որ մեղասակց չունի, ինք որոշած է փախչիլ պահակապետէն դէպքէն քանի մը օր առաջ:

Լուրեր Արաբական Աշխարհէն

Եմենի մէջ Բախումները Կը Շարունակուին

Եմենի ժողովրդային դիմադրութեան ուժերը յաջողեցան տիրապետել հարաւային Ալ Եմենի անուսական 11 տարածքներուն, ներառեալ Զուսիններու տիրապետութեան տակ գտնուող կարճատեւ հատուածներու: Կ'ակնկալուի, որ ազգային դիմադրութեան ուժերը յարձակում գործեն Ալ քաղաքին վրայ: Նաեւ կ'ակնկալուի, որ այս ճակատամարտին յաջողութեան ստորապատկերները մտաւորաբար թափանցուցանուին Սանաա, որ կը գտնուի Զուսիններու տիրապետութեան տակ: Բախումներ տեղի ունեցան նաեւ կերտական Պայտա նահանգին մէջ, մինչ նախագահ Ալլաուի Ռապի Մանսուր Զատի աշխատանքային այցով ուղղուեցաւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Քրիստոնեայ-Իսլամ Երկխոսութիւնը Հրամայական Անհրաժեշտութիւն Ե Համաշխարհայնացած Աշխարհին Մէջ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս

Երկուշաբթի, 10 Օգոստոս 2015-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեցին «Կրօններու եւ Մշակոյթներու Գերազանցիկ» յանձնախումբի անդամները, գլխավորութեամբ ընդհանուր քարտուղարին՝ Շէյխ Յուսէյն Ամատ Շահատի: Ժողովին ներկայ էին նաեւ Կաթողիկոսարանի Միջ-եկեղեցական բաժանմունքի վարիչ Յուսէյն Ծ. Կրթ. Մարտիրոսեան եւ Միջ-եկեղեցական Յանձնախումբի անդամ Դոկտ. Ժան Սալմանեան:

Ընդհանուր քարտուղարը նախ անդրադարձաւ Վեհափառ Հայրապետին բանալի դերակատարութեան՝ միջ-եկեղեցական, միջ-կրօնական եւ ժողովուրդներու միջեւ խաղաղ համագոյակցութեան բնագաւառներուն մէջ տարած իր աշխատանքներուն: Շէյխ Շահատէ յայտնեց, թէ լաւ կը ճանչնայ հայ ժողովուրդի պատմութիւնը եւ անոր ցաւը կը համարէ իր ցաւը: Ան խստի դատապարտեց Հայոց Ցեղասպանութիւնը, պատասխանատու սեպելով Թուրքիան 100 տարի առաջ կազմակերպուած ու գործադրուած ցեղասպանութեան: Ան նկատեց, որ Թուրքիան այսօր եւս ժխտական դերակատարութիւն ունի Միջին Արեւելքի ապակայունացման, ինչպէս նաեւ ահաբեկիչ գանդակային խմբակներու զօրակցութեան մէջ: Վերջապէս, Շէյխ Շահատ ըսաւ, թէ ինչ այս առիթը կ'ուզէ օգտագործել, եւ Կաթողիկոսարանէն կոչ ուղղել բոլոր քրիստոնեաներուն կառչած մնալու իրենց արժանատիներուն եւ հողերուն Միջին Արեւելքի մէջ:

Վեհափառ Հայրապետը իր կարգին գնահատելով երկխոսութեան այս նախաքայլը, ըսաւ. «Քրիստոնեայ-իսլամ երկխոսութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է համաշխարհայնացած այս աշխարհին մէջ, բոլոր մակարդակներու վրայ: Ամբողջ աշխարհը այսօր կրօնական ծայրայեղականութեան դժուարութեան դէմ յանդիման կը կանգնի, եւ մեր բոլորին պարտաւորութիւն է պայքարիլ ծայրայեղականութեան դէմ»: Նորին Սրբութիւնը քրիստոնեայ-իսլամ համագոյակցութիւնը նկատեց տարածաշրջանին նկարագիրը, որուն պահպանումին համար պետք է ճիշդ թափանք քրիստոնեաներն ու իսլամները հաւասարապէս եւ զգուշացուց կրօնքին քաղաքական նպատակներով շահագործուելուն վտանգէ: Անդրադառնալով Թուրքիոյ դերակատարութեան Նորին Սրբութիւնը յայտնեց. «Հայ ժողովուրդը պատմութեան ընթացքին լաւապէս ճանչցած է թրջական նեւթ քաղաքականութիւնը: Մենք օրին, արաբական աշխարհի գանազան պատասխանատուները զգուշացուցից թուրքոյ երկրի մի ու վտանգաւոր քաղաքականութեան: Այսօր, բոլորին ծանօթ են, Թուրքիոյ որդեգրած նոր փանթուրանիզմը եւ ծայրայեղականութեան ու ահաբեկչութեան իր կողմնակցութիւնը»:»

Պատմութիւնը Խճանկար Ե Զօդուած Սիրոյ Եւ Ոգիի Շաղախով

«Պատմութիւնը» իսկապէս տպաւորիչ խճանկար մըն է, խճանկար զօդուած սիրոյ եւ ոգիի շաղախով, որուն գունագեղ խիճերը ոչ միայն չեն խճողեր պատմութեան ամբողջութիւնը, այլեւ իւրաքանչիւր պատմութիւն իր գոյնը բերելով՝ միասնաբար կը վերակերտեն ազգի մը հաւատքի դիմապատկերը՝ իր լոյս ու ստուերով:

Ճիշդ է, որ շատ գրուած է խօսուած է, բայց մինչ այդ եկեք անգամ մը եւս խօսինք, թէ ի՞նչ է պատմութիւնը:

Ազգերու պատմութիւնը ցեղագրական ու քաղաքական ուսումնասիրութիւն մըն է՝ զարդարուած դարերու յեղաշրջումով ու անոնց քաղաքական յառաջդիմութեան եւ քաղաքակրթութեան յառաջընթացի վերելքին սերտողութեամբ:

Պատմական դարերու շրջանին Ալիան, Եւրոպան ու հիւսիսային Աֆրիկէն բնակավայրը եղած էին բազում ցեղերու, քաղաքակիրթ կամ վայրերի, աշխարհակալ կամ ասպանդակակալ որոնց ամբողջական գործունեութիւնը, յառաջդիմութիւնը, քաղաքակրթութիւնը կը կազմեն պատմագիտութեան կարեւոր գիծերը:

Պատմագիտութեան հաւաքական ուսումնասիրութիւնը կրնանք նկատել ամենադժուար, բայց նոյնպէս ամենակարեւոր գիտութիւններէն մէկը:

Պատմագիտութեան անհրաժեշտ մաս նկատուած են մարդկային կեանքի պատմական ժամանակաշրջանները, պատմութեան անօրինակութիւնները, դրամագիտութիւնը, դիւանագիտական փաստաթուղթերը, ժամանակագրութիւնը, բեւեռագիր, գրչագիր, մեքենագիր արձանագրութիւնները:

Այս բոլորէն իւրաքանչիւրին վրայ կ'արժէ առանձին ուսումնասիրութիւններ գրել, եւ անշուշտ գրուած է ալ:

Մարդ Եւրոպայի վրայ պահելու եւ տեսլի արծարծելու իմաստով՝ որքան անհրաժեշտութիւն է պատմութեան սերտողութիւնը:

Պատմական դրուագներու շարքը անկասկած կրնայ երկարիլ, արդար հպարտութիւն պատճառելով ամեն մէկ այսպիսի յաջողութիւններու պատկանող ազգերու գաւակներուն:

Պատմութիւնը կը սատարէ իրական հետաքրքրութեան հանդէպ հիմնի ու նորին, հանդէպ մեծ ու փոքր ազգերու անցեալին ու ներկային:

Պատմագիտութեան հմայքը այնքան ազդեցիկ եղած էր Հռոմի մէջ, որ հռոմէացիք պատմագիտութիւնը կը նկատէին իբր հռետորութիւն...:

Պատմութիւնը կը նպաստէ միտքի մշակումին ու յիշողութեան: Պատմական հանապազօրեայ սերտողութիւններով, բազմաթիւ դէպքերու կը ծանօթանանք եւ կը սորվինք՝ անոնց ըլլալն անուներ կամ թուականներ, որոնց ամբողջական ու անթերի հաւաքումը միտքի մէջ, կ'օժանդակէ ուսանողին թէ՛ միտքը պայծառացնելու եւ թէ՛ յիշողութիւնը զօրացնելու:

Պատմութիւնը կամուրջ մըն է, որուն վրայն պատմութեան

ուսանողը կ'անցնի հին աշխարհի հեռուոր դէպքերէն, մինչեւ մեր օրերու զարգացումներուն այլազան դրուագները:

Պատմութեան ուսումնասիրութիւնները, հետաքրքրական բաղձանքներ յառաջ կը բերեն մեր մէջ, շրջագայելու համար համակ աշխարհը՝ հոն, ուր այնքան յեղաշրջումներ ու քաղաքական կեանքի սկզբնապիւրջ իրադարձութիւններ՝ համակեցին ազգերը եւ ցեղերը նախապատմական շրջանէն մինչեւ մեր օրերը:

Պատմութիւնը ունի իր նախապատմական ու պատմական մեծ շրջանները:

Պատմութեան նախապատմական կոչուած շրջանը կը բաժնուի որոշ դարաշրջաններու:

Եղան պատմագետներ, որոնք նախապատմական կոչեցին այն դարաշրջանը, երբ քաղաքակրթութիւնը չէր պատկերացուցած իր անդրանիկ երանգները՝ այսինքն գիր ու գրականութիւն, թուանշան ու արձանագրութիւն եւ այլն: Ուրիշներ նախապատմական շրջանը կը գատորոշեն, համաձայն նախաամարդու բնակութեան ձեւերուն, անոր աշխատանքի միջոցներուն, ապրուստային կերպերուն ու տակաւին նոյնիսկ անկազմակերպ ցեղերու վարած կեանքին:

Այս պայմաններուն տակ, նախապատմական շրջանը ոմանց համար կը սկսի Է.Ա. 2400ին կամ Է.Ա. 1900ին, իսկ ոմանց համար մինչեւ Է.Ա. 5000 կամ 4000 թուականը:

Անկասկած նախապատմական շրջանին ո՛չ պետութիւն եւ ոչ ալ քաղաքական կազմակերպութիւն գոյութիւն ունէին, այլ կիսավայրերի ցեղեր խումբերով, աստանդակ կեանքի մը կ'անցնէին, զբաղելով որսորդութեամբ, անասնապահութեամբ, ձկնորսութեամբ եւ բուսականութեամբ:

Այս կարգի կիսավայրերի ցեղեր ընդհանրապէս կ'ապրէին մեծ ու կոծր գետերու եզրերէն եւ հետզհետէ անոնց ունեցած քաղաքակրթական վերելքը՝ պատմաբանները կը նշեն հետեւեալ պատմական ժամանակաբաժանումներով.

- Ա.- Պալէոլիթ (հին քարի դար)
- Բ.- Նեոլիթ (սոր քարի դար)
- Գ.- Պրիստիթի դար
- Դ.- Պրոնզի դար (անագապղինձ)
- Ե.- Երկաթի դարեր:

Այսուամենայնիւ պատմութեան կարեւորագոյն շրջանն է պատմական կոչուած շրջանը, որ կը բովանդակէ 3Եւ 4 հազար տարիներու ընթացքին ազգերու քաղաքական, քաղաքակրթական, ցեղագրական, տնտեսական, գիտական եւ մշակութային յեղաշրջումը: Ատոնց պատմութիւնը կրնանք ստոյգ ու վաւերական նկատել, քանի որ անոնք ամենօրեայ հնագետներու պեղումներու, ուսումնասիրութիւններու եւ նորանոր ծանօթութիւններու շնորհիւ՝ իրականութեան սեփականութիւնը դարձած են:

Պատմական շրջանն ալ իր կարգին կը ստորաբաժնուի քանի մը կարեւոր մասերու, թէեւ հոս ալ պատմաբաններէն շատեր գանազան դարաշրջաններ կը ստեղծենք կրնանք պատմական շրջանը բաժնել չորս գլխաւոր մասերու, իւրաքանչիւրը որոշելով քաղաքական կարեւոր դէպքերու ընթացքը:

Առաջինը հին պատմութիւնն է, որ կը վերջանայ Հռոմի անկման թուականով, Է.Շ. 426ին, երկրորդը միջին դարն է, որ կը սկսի հին Հռոմի անկման թուականով ու կը շարունակուի մինչեւ Հռոմի կամ Բիւզանդիոսի մայրաքաղաք Կոստանդնուպոլսոյ առումով՝ Է.Շ. 1453ին, երրորդը նոր պատմութիւնն է, որ կը սկսի 1453ին, որ կարելի է երկարել մինչեւ Ֆրանսական յեղափոխութիւնը՝ 1789 եւ չորրորդը ժամանակակից պատմութիւնն է, որ Ֆրանսական յեղափոխութեան թուականէն սկսելով կը շարունակուի մինչեւ մեր օրերը:

Պատմութիւնը ունի որոշակիօրէն մասնաւորաբար հետեւեալ երեք ուսումնասիրութիւնները՝ Ազգային պատմութիւն, Ընդհանուր ազգերու պատմութիւն եւ Տիեզերական պատմութիւն: Պատմութիւնը իր մէջ կը բովանդակէ թէ՛ արուեստը եւ թէ՛ գիտութիւնը:

Պատմութիւնը այսօր կը նկատուի աշխարհի բարձրագոյն գիտութիւններէն մին եւ կը կազմէ համալսարաններու ամենէն կարեւոր նիւթերէն մէկը...:

Իսկ մեր պատմութիւնը՝ Հայ ժողովուրդի պատմութիւնը իր բովանդակութեամբ, իր տաք ու պաղ կողմերով, իր սեւ ու սպիտակ երեսներով, իր ճառագայթող ու մթապսած խնդիրներով, ներքին թէ արտաքին ազդակներու լոյսին տակ, պատմագետներու եւ հնագետներու հիացումին արժանացած է: Անոնք պրպղտած ու պեղած են աշխարհագրականօրէն Հայկական Բարձրաւանդակ կոչուած տարածութիւնը, անոր վրայ ապրած Լաւիրեան ժողովուրդը, խօսած լեզուն, երկրպագած շատուածներն ու աստուածները, համաշխարհային ճանապարհներու խաչածեման կետին վրայ գտնուող իր աշխարհագրական դիրքը:

Պատմութիւնը հեռուոր թէ մօտաւոր, մասնաւորաբար մեր՝ Հայ ժողովուրդի պարագային, այն անապառ շտեմարանն է, որ մեզ կը մղէ անկէ քաղելու դասեր, վերապեղելու գայլն՝ ի ծառայութիւն մեր այսօրուան պահանջներու յարմարեցումին ու հարատեւութեան, արդիականացման ու վերանորոգման:

Հայոց Պահանջատիրութեան 100 ամեակի այս օրերուն, մեր ժողովուրդի առաջնորդները պահը եկած պետք է նկատեն, եթէ ոչ ուշացած ու պետք է գիտակցին, որ մեր հաւաքական ուժը, միջոցներու կարելիութիւնները պետք է ուղղել մեր ազգային - հայկական շահերը պաշտպանելու նպատակակետին, անշուշտ միշտ հիմնուելով մեր պատմութեան պայծառ էջերուն վրայ:

Պետք է ընդունիլ ու հաւատալ, որ Հայ ժողովուրդի պատմութիւնը իր լաւ թէ վատ կողմերով մերն է: Իսկ մենք պետք է համարուած ըլլանք լաւ ու անլի լաւացնելով, օգտուելով անկէ ու գուրգուրաւով անոր վրայ:

ՕՐԱՆ ՊՈՏՐՈՒՄԵԱՆ

Սերի Պայմանագրի 95-Ամեակը Եւ Մեր Պահանջատիրութիւնը Այսօր

Ազգերու, նամանակը Եւրոպական զարգացած պետութիւններու դիւանագիտական գործունեութեանց ու «խաղ»երուն մէջ ծանօթ է Սերը եւ անոր բովանդակութիւնը, որ սակայն հակառակ իրենց իսկ հովանաւորութեամբ զգեցած իւրայատուկ տարագին, ցաւ ի սիրտ ան մնաց թողոթի վրայ (միայն)։... որպէս ընդունուած, բայց չգործադրուած դաշինք, նոյն ինքն եւրոպացի օրուայ դիւանագետներու շահադիտական կեցուածքներուն արդիւնքով:

Շատերուն ծանօթ Սերի հաշտարար պայմանագիրը ստորագրուեցաւ ասկէ ուղիղ 95 տարիներ առաջ, Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի արուարձաններէն Սերի մէջ, 10 օգոստոս 1920ին: Ըստ կայացած համաձայնագրի, Հայաստանը Արեւմտեան Հայաստանի տարածքներէն պիտի ստանար 90.000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն, իսկ Հայաստանի Հանրապետութեան այդ օրերուն ունեցած հողատարածքին հետ՝ անոր սահմանները պիտի կազմէին 161.330 քիլոմէթր քառակուսի, աւելին՝ նաեւ Սեր Ծովը եւ Եփրատի հնարաւորութիւն:

Սերի պայմանագիրը կնքուեցաւ մէկ կողմէ Թուրքիոյ սուլթանական կառավարութեան, միւս կողմէ Առաջին Համաշխարհային պատերազմէն յաղթական ելած դաշնակից պետութիւններու, առաւել՝ Հայաստանի միջեւ: Դաշնակից պետութիւններէն ներկայ էին Անգլիան, Ֆրանսան, Իտալիան, Ճափնոն, Պեկինը, Յունաստանը, Լեհաստանը, Փորթուգալը, Ռումանիան եւլլ: Հայաստանի կողմէ հաշտեցման համաձայնագիրը ստորագրեց գորդ, մտաւորական Աւետիս Լիւսիան: Ան եւ արեւմտահայութեան ներկայացուցիչ, Ազգային պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպար փաշան, նախապէս գլխաւոր դաշնակից պետութիւններու հետ արդէն կնքած էին լրացուցիչ պայմանագիր՝ ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներուն մասին:

Դաշնակից պետութիւններ, միասնաբար մաս կազմելով հաշտեցման համաձայնագրին եւ ստորագրելով զայն, ինքնաբերաբար եւ բնականաբար ճանչցած եղան նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս «ազատ ու անկախ» երկիր:

Սերի պայմանագիրը բաղկացած էր 13 մասերէ եւ 433 յօդուածներէ, որմէ պիտի օգտուէին հայեր, յոյներ, քիւրդեր եւ բնականաբար յաղթանակած երկիրներ: Ըստ պայմանագրի ոգիին, Թուրքիան ունի դաշնագրով Հայաստանը կը ճանչնար որպէս «ազատ ու անկախ պետութիւն» եւ ըստ դաշնագրի, Թուրքիան եւ Հայաստանը համաձայնեցան Երզրումի, Տրապիզոնի, Վանի ու Պիթիսի նահանգներու միջեւ սահմաններու դասաւորումը թողուլ Միացեալ Նահանգներու նախագահին, միաժամանակ միշտ պատրաստակամ ըլլալով ընդունելու անոր արձակելիք իրաւարար վճիռը: Ինչ կը վերաբերի Ազրաբեյճանի, Վրաստանի եւ Հայաստանի միջեւ սահմաններ որոշելու հարցին, այդ պիտի իրականանար 3 պետութիւններու միջեւ տեղի ունենալիք ուղղակի բանակցութիւններու միջոցաւ:

Եր արդարեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Կլուտո Ուիլսոնը 1920 թուականի Նոյեմբեր 22ին ատարելով իր անկողմնակալ որոշումը, զայն յանձնեց Եւրոպական դաշնակից տերութիւններուն, եւ ըստ անոր իրաւարար որոշման, Հայաստանը պետք էր ստանար Վանի եւ Պիթիսի նահանգներուն աւելի քան կեսը, Երզրումի վիլայեթի հիմնական մասը, իսկ Տրապիզոնի արեւելեան հատուածը՝ ներառեալ համանուն քաղաքը:

Ինչպէս յիշեցինք վերը, ընդհանուր առմամբ այդ տարածքը 90 հազար քմ2 էր եւ հոն կար կարեւոր պարագայ մը եւս, Հայաստանին կ'ապահովէր ելք դեպի Սեր Ծով:

Ըստ ժողովականներու Սերի պայմանագրով պիտի լուծուէր Անկախ եւ Միացեալ Հայաստանի ստեղծման հարցը: Սակայն ինչպէս այլ դաշինքներու պարագային, դժբախտաբար Սերը եւս մնաց թողոթի վրայ, որովհետեւ Թուրքիոյ մէջ այդ օրերուն իշխանութեան հասած «տեռմէ» Մուսթաֆա Բեմալ մերժեց ճանչնալ՝ սուլթանական Թուրքիոյ ստորագրած պայմանագիրը եւ շարունակեց իր արշաւանքները թէ՛Կիլիկիոյ եւ թէ՛ Արեւմտեան Հայաստանի գրեթէ ամալացած նահանգներուն մէջ, աւելի ուշ իր ուժերը հասցնելով մինչեւ Արեւելեան Հայաստանի սիրտը... այդ ժամանակ օրուայ Հայաստանի իշխանութիւններուն պարտադրել տալով Ալեքսանդապոլի ծանօթ ու շատ յայտնի դաշնագիրը՝ 2 Դեկտեմբեր 1920ին...:

Գոռոզ ու միանձնեայ ղեկավար Մուսթաֆա Բեմալ, Անաուլիան պարպելէ ետք հայերէն, յոյներէն եւ քրիստոնեայ այլ փոքրամասնութիւններէն ու առաւելաբար օգտուելով ստեղծուած միջազգային նոր իրադրութենէն, նամանաւանդ որոշ պետութիւններու հետ իր հաստատած սիրովի բարեկամութեան արդիւնքով՝ երոպացիներէն պահանջեց Սերի պայմանագրի վերանայումը, որու արդիւնքով ծնաւ տիրաւորակ Լոզանի պայմանագիրը...: Արդարեւ 20 Նոյեմբեր 1922 թուականին Լոզանի մէջ գումարուած խորհրդաժողովին, ան յաջողեցան վերացնել տալ Սերի դաշնագրի պայմանները՝ եւրոպացիներու զարմանալի՝ եւ զարմացնող՝ դիւանագիտական կեցածքներուն ու խաղերուն արդիւնքով, որոնք մոռցած էին հայն ու Հայաստանը, ջարդի ու կոտորածի եւ միլիոնաւոր անմեղ մարդոց արիւնք...: Այլ խօսքով քրիստոնեայ Եւրոպան կրկին երես կը դարձնէր քրիստոնեայ Հայաստանին... որ իր 30.000 քառք քմ2 տարածութեամբ միայն, 29 Նոյեմբեր 1920 թուականէն սկսեալ պիտի գտնուէր Խորհրդային Միութեան սահմաններուն մէջ:

Ելք խօսքով Հայաստան կրկին անգամ գոհը պիտի դառնար Եւրոպացիներու կամ օտարներու որբէւ քաղաքականութեան...: Եւրոպացիներ օրին ոչ միայն բաւարարուած էին եղածով, այլեւ ճանչցած էին Մուսթաֆա Բեմալի Անգարայի կառավարութիւնը եւ Սերի պայմանագրով Հայաստանին տուած հողատարածքները ամենայն յօժարութեամբ, ոսկի ափսէի վրայ դրած յանձնեցին Թուրքիոյ... թաղելով Սերի համաձայնագիրը:Աւելին, անոնք ձեռով մը «նուիրեցին» նաեւ Թուրքիոյ կողմէ Արեւելեան Հայաստանէն զաւրուած նոր հողատարածքները, որոնք կ'ընդգրկէին Հայաստանի նախկին շրջաններ Կարսը, Արտահանը, Սուրմալունը...:

Ցեղասպանութեան 100 ամեակի այս տարուան մէջ, հակառակ Սերի դաշնագրի ստորագրման թուականէն անցած 95 տարիներուն, այսօր բոլոր ժամանակներէ աւելի մեք Սերի դաշնագրին կը նայինք իրապիտական դիրքով, հաւատալով անոր իրազեկութեան ու անժամանցելութեան, քանի որ անոր յաջորդող Ալեքսանդապոլի դաշնագիրը, որ կու գար ջնջելու Սերի պայմանները, իրականութեամբ տեսնելու է չունի պաշտօնական հանգամանք, որովհետեւ գետնի վրայ զայն ստորագրող երկու կողմերն ալ այդ օրերուն գուրկ էին պետական իրաւական հանգամանքը...:

ՀԱՍԲԿ ՄԱՐՏԻՐՈՒՄԵԱՆ

Our e-mail addresses are:

- zartonkadl@gmail.com
- zartonkdaily@yahoo.com
- website: www.zartonkdaily.com



ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ - 100 ԱՄԵԱԿ

«Յեղասպանութեան Յարցին Մէջ Պատմական Իրականութեան Ծիշդ Կողմը Պիտի Մասնը». Զեկի

Գանատայի պաշտպանութեան նախարար Ծեյսըն Զեկի, Թորոնթոյի մէջ Հայ-գանատական պահպանողական ընկերակցութեան կազմակերպած երեկոյին ընթացքին իր արտասանած խօսքին մէջ, վերահաստատած է իր կուսակցութեան յանձնառութիւնը՝ Հայոց Յեղասպանութեան հարցին մէջ արդար պայքար մղելու վերաբերեալ: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը:

«Մեր Պահպանողական կուսակցութիւնը, անկախ քաղաքական ճշումներէ, պիտի շարունակէ հաստատակամօրէն մնալ Հայոց Յեղասպանութեան հարցին մէջ պատմական իրականութեան ճիշդ կողմը», ըսած է Զեկի:

Ան ընդգծած է նաեւ Պահպանողական կուսակցութեան պատրաստակամութիւնը՝ Միջին Արեւելքի կրօնական եւ ազգային փոքրամասնութիւններուն ոտնահարուած իրաւունքները պաշտպանելու:



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Աշխարհահռչակ Դերասանը Հայոց Յեղասպանութեան Մասին Նոր Ֆիլմի Դերակատար

Հայ բեմադրիչ Արտակ Իգիթեան կը նախատեսէ Հայոց Յեղասպանութեան մասին «Անատոլիական պատմութիւն» (Anatolian Story) վերնագիրով ֆիլմ նկարահանել, ուր պիտի խաղան Ֆրանսական շարժանկարի յայտնի դեմքեր ժերար Տէփարտիէն եւ Սամի Լասերին:

Ինչպէս կը հաղորդէ «Արմէնֆիլմ»-ը վկայակոչելով rusarmino.ru-ն (ռուս-հայկական տեղեկատուական

գործակալութիւն), ֆիլմի գլխաւոր հերոսը Մուսթաֆա Ղազին է, որ իր կեանքը նուիրած է Թուրքիոյ ծառայելու: Ծեր հասակին Մուսթաֆա, որ ամբողջ կեանքի ընթացքին ատած է Հայաստանն ու հայերը կը պարզէ, որ հայ է: Ֆիլմի բեմագրութեան (սենարի) հեղինակը Մարգ Արէնն է (Կարէն Մարգարեան):

Ֆիլմի երաժշտութիւնը պիտի յորինէ Միշէլ Լեկրան: Ըստ կայքին ֆրանսահայ յայտնի երգահանը պահանջած է, որ ֆիլմի գլխագիրներու մէջ Լեգրանի կողքին աւելցնեն նաեւ իր հայկական Տէր Միքայելեան աղանուրը: Ֆիլմի մէջ գլխաւոր հերոսի՝ Մուստաֆայի կերպարը պիտի մարմնաւորէ ժերար Տարմոն, իսկ անոր որդին՝ Սամի Լասերին, որ հայ հանդիսատեսին առաւելաբար ծանօթ է «Թաքսի» ֆիլմերու շարքէն: Տէփարտիէն ֆիլմի մէջ կը մարմնաւորէ փաստաբանը:

Կը նախատեսուի, որ ֆիլմի նկարահանման աշխատանքները սկսին 2015ի Նոյեմբերին: Նկարահանումները կ'իրականան Հայաստանի, Թուրքիոյ, Ֆրանսայի եւ Գերմանիոյ մէջ:

ՍՈՒՐԻԱԿԱՅ ՕՐԱԳԻՐ

Խաղողօրհնէք Հալէպի Հայ Ծերանոցին Մէջ

Perio newsի փոխանցմամբ Օգոստոս 9-ին, Հալէպի Հայ Ծերանոցին մէջ կատարուեցաւ Խաղողօրհնէք:



Արարողութիւնը կատարեց Տ. Մաշտոց Ա. Զինյ. Արապաբեան: Հայ Ծերանոցի պատասպարեալները, ներկայութեամբ ինամակալութեան եւ պաշտօնութեան հետեւեցան Խաղողօրհնէքի արարողութեան:

Հալէպի տագնապալի այս ծանր օրերուն, եկեղեցական այս արարողութեան ընթացքին խաղողութեան մաղթանք կատարուեցաւ: Ապա ներկաները մէկ առ մէկ ստացան իրենց յատկացւած խաղողը, որ տրամադրուած էր բարերար-նուիրատուներու կողմէ:

Հայկական Կեդրոններ Կը Ծարունակեն Ջրամատակարարման Ծառայութիւն Կատարել Հալէպի Մէջ

Հալէպի բնակչութիւնը կը շարունակէ ճաշակել աշխարհի ամենէն վտանգաւոր պատերազմներէն մէկը՝ հրասանդերու, կազի շիշերու եւ գաւազան տեսակի հրթիռներու արձակումներուն պատճառով: Ահա արդարեւ Կեդրոնները ի վեր կը դիմագրաւեն նաեւ կենցաղային դժուարութիւններ: Այս մասին կը յայտնէ Perio newsը:

Արդարեւ քանի մը շաբաթ է ի վեր, Հալէպի մէջ ջրի հոսքի դադարեցման պատճառով՝ հերթաբար ջրամատակարարում կը կատարուի քաղաքի գանձակային շրջաններու մէջ:

Քաղաքի տարբեր կառուցներ, ըլլան մզկիթներ կամ որոշ շէնքեր, որոնց կարգին նաեւ հայկական ակումբներ, կեդրոններ եւ եկեղեցիներ, որոնք ջրի որոնք եւ ջրամբարներ ունին, կը շարունակեն ջրի մատակարարման ծառայութիւն կատարել անկճար: Ուստի բազմաթիւ փողոցներու մէջ կարելի է տեսնել՝ երկար շարքերով ջուր ամբարելու համար իրենց կարգը սպասող մարդիկ:

Չուրի տագնապի հետեւանքով պարտք կը զգանք, կը յատարարէ Perio newsը մեր սիրելի ժողովուրդին՝ թելադրելու, որ զգոյշ ըլլան անվստահելի աղբիւրներէ ջուր ըմպել, որպէսզի օգտագործման հետեւանքով չհիւանդանան յատկապէս մեր երախաները:



Սուրիոյ Մէջ Դարձեալ Հայ Զինուոր մը Չոհուած Է

Երկուշաբթի, 10 Օգոստոս 2015-ին Դամասկոսի Չապատակի շրջանին մէջ, բախումներու ընթացքին նահատակուեցաւ սուրիական բանակի հալէպահայ զինծառայող՝ Հաբէթ Սանուկ:



Աբրիկեան (1993ի ծնունդ): Այս մասին հաղորդեց «Գանձասարը»:

«Հալէպի Հայութեան Իրավիճակը Մեր Գլխաւոր Մտահոգութիւնն Է». ՀՀ Սփիւռքի Փոխ Նախարար Սերժ Սրապիոնեան

«Ամեն ինչ հետեւում ենք Սիրիայի ու մասնաւոր Հալէպի հայութեան իրավիճակին», մեր պաշտօնակից «Արեւելք»-ին յայտնած է ՀՀ Սփիւռքի փոխ նախարար Սերժ Սրապիոնեան:

Փոխ նախարարը նաեւ յայտնած է, որ ապահովական մտահոգութիւններու բերումով անյարմար է իրենց ունեցած տեղեկութիւնները եւ Հալէպի հայութեան վերաբերող ծրագիրները իրապարկել:



Ըստ փոխ նախարարին Հալէպի իրադրութիւնը կը շարունակէ մնալ ծանր եւ քիչ չէ թիւը այն հալէպահայերուն, որոնք փախաբեր յայտնած են դուրս գալու երկրէն: Նախարարը, որ յարմար չէ նկատած յստակ ծրագիրներու մասին խօսելու նշած է, որ Հալէպի հայութեան տագնապը դրուած է ՀՀ բարձրագոյն մարմիններուն սեղանին եւ այս առումով այնտեղի հայերուն օգնութեան հասնելու բազմազան սենարներ կան ու խնդիրը կապուած է գետնի վրայ գրանցուող զարգացումներուն հետ: Սրապիոնեան նաեւ խօսած է Թուրքիա ապաստանած եւ 9 անդամներ բաղկացող ընտանիքի մը մասին, որոնք նոյնպէս փախաբեր յայտնած են Հայաստան տեղափոխուելու, «գիտնէք նաեւ, որ Թուրքիոյ իշխանութիւնները համաձայնութիւն են տուել, որպէսզի այդ ընտանիքը Հայաստան փոխադրուի», աւելցուցած է փոխ նախարարը: Սրապիոնեան նաեւ վստահեցուցած է, թէ որեւէ զարգացումի պարագային Սփիւռքի նախարարութիւնը, ինչպէս նաեւ ՀՀ օրինապահ մարմինները պատրաստ են կարելի կարգադրութիւններ ընելու՝ վտանգի գոտիէն դուրս հանելու համար մինչեւ այս պահը Հալէպի մէջ դիմադրող հայորդիները:

Մարզական

ԵՐՈՊԱՅԻ ՄԻՔԸՐ ԲԱՏՍԿ ՊԱՐՍԵՆՈՆԱՆ ՇԱՐՇՅԱԼ 5-ՐԴ ՏԻՏՂՈՍԸ

Կրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի «Էրովսուկի Սթատիոնի» մարզադաշտին վրայ մրցեցան Զեմփիընզ Լիկի ախոյեան «Պարսելոնա»ն եւ Իւրոբա Լիկի ախոյեան «Սեւիլյա»ն: Մրցումին հաշիւը կանուխէն բացաւ Սեւիլյան, Պանեկայի միջոցով, 3-րդ վայրկեանին: Պատասխանը չուշացաւ: Մեսսի՝ 7րդ եւ 15րդ վայրկեաններուն, Դաֆնիսի՝ 44րդ վայրկեանին, Սուարեզի



փոխանցումով եւ Սուարեզ՝ 52րդ վայրկեանին, Պուսքեցի փոխանցումէն օգտուելով հաշիւը դարձուցին 4-1: Սակայն մինչեւ մրցումին աւարտը խուճ Լիկայի 57րդ վայրկեանին, Վիթորիոյ փոխանցումով նշանակեց Սեւիլյայի երկրորդ կողմ, Կամբերո տուգանային հարուածով նշանակեց չորրորդը, իսկ 81րդ վայրկեանին Զանովիանքա հաշիւը դարձուց 4-4, Իմմոպիլի փոխանցումէն օգտուելով: Երկարաձգուած ժամանակի 115րդ վայրկեանին Փետրոն նշանակեց Պարսելոնայի յաղթանակի կողմ: Մրցումը աւարտեցաւ 5-4 հաշիւով ի նպաստ Պարսելոնայի եւ խումբը շահեցաւ իր 5-րդ Սիւբբը բաժակի տիտղոսը: Այս տիտղոսը նաեւ շահած են «Միլան»ը՝ 5 անգամ, «Լիվըրփուլ»ը՝ 3 անգամ, «Ռեալ Մատրիտ»ը, «Այաքս»ը, «Անտերվերթ»ը, «Եուվերթիս»ը, «Վալենսիա»ն, «Ալթէթիքո Մատրիտ»ը՝ 2 անգամ եւ 15 այլ խումբեր մեկական անգամ:

ՀՈՒՆՏԵՐԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ Ա.ՀՆԱԳՐՈՒՄ ԱՅԱԶՍԸ ՅԱՂԱՅԱԿՈՎ ՍԿՍԱԼ

Հոլանտայի ախոյեանութեան առաջին հանգրուանին Ամսթերտամի «Այաքս»ը իր դաշտէն դուրս յաղթեց Ալքմարի «Էյ 2տտ»ին 3-0 հաշիւով: Ա. դասակարգի նորեկներն են «ՏԵ Կրասֆալդ»ը, Նայմեկընի «Էն Ի Սի»ն եւ Զերքրատի «Ռոտտ Ճէյ Սի»ն: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Էյ 2տտ Ալքմար - Այաքս Ամսթերտամ 0-3,
- Կոլեր.Էլ Ղազի 14րդ, 38րդ, Կիստէ 40րդ, փոխ.Տիլք (2), Կիստէ,
- Էյ Տի Օ Տէն Հասակ - Փի Էս Վի Ալստիովըն 2-2,
- Կոլեր. Մահեր 23րդ, Տէ Եոնկ 62-րդ, փոխ.Փրեօփըր, Նարսիկ,
- Ֆեյենուրտ Ռոթթըրտամ - Իւթելթս 3-2,

ԶՈՒՅԵՐԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԶԻՐԻՆ ՅԱՂԱՅԱԿԱՆ

Զուիգերիոյ ախոյեանութեան 4-րդ հանգրուանին «Զիրիխ»ը իր դաշտէն դուրս յաղթեց «Սենթ Կալըն»ին 2-0 հաշիւով: Օլիվըր Պաֆ եւ Լեստրո Տի Կրեկորի նշանակեցին կոլերը: Արտեմ Սիմոնեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին «Զիրիխ»ի կազմէն: Զուիգերիոյ առաջին դասակարգը կը բաղկանայ 10 խումբերէ: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Լիւգերն - Պազըլ 1-3,
- Կոլեր.Պ.Էմալյօ (2), Մ.Տելկատսո,
- Կրեկորի - Լուկանօ 6-1,
- Դաստըրում.
- 1-Պազըլ 12 կէտ, 2-Կրեկորի 9 կէտ, 3-Եանկ Պոյ 6 կէտ, 4-Զիրիխ 5 կէտ:

ՀԻՆԱԳՐԹԻ ՕՐՈՒՄ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ
Ստորեւ տեսնել Հինգշաբթի օրուան մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբի դիրքը).

ԶՈՒՅԵՐԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ	ԺԱՄ
Սիոն (6) - Զիրիխ (4)	20:45
Կառուզ (10) - Կրեկորի (2)	20:45
ՊՐԱՅԻՒ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ	
Փոնթ ֓րեթա (10) - Ալլայ (16)	01:30
Ալթէթիքո Միլերո (1) - Կրեմիօ (3)	03:00
ԱՄՆ-Ի ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ	
Նիւ Եորք Սիթի (8) - Տի Սի Եուկայթըտ (1)	02:00
ԹԵՆԻՍԻ ՄՈՆԻՏԵՐԻՆԻ ՄԱՍՔԸՐԸ	
Ժամը 22:00 էն սկսեալ:	

ՀԱՄԱՅՆՅԱՎԱԿԱՆ ԽԱՐԵՐ ԼՈՂԱՐՇԱԻ ՊԱՐՄԱՆՈՒՅԻ ԱՆՈՅՏԱՆԸ

Համահայկական Խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Չաբարեանը իր գրասենեակին մէջ ընդունած է կիպրահայ լուրդրոյի, 14 տարեկան Մարիա Սոմաքեանը: Լուրդրոյի մասնակցած է վեց մրցումներու եւ շահած 2 ոսկի, 3 արծաթ եւ 1 պղնձ մետալներ: Պարմանուի տաս տարիէ ի վեր կը մարզուի եւ շատ ուր տիտղոսներ շահած է Կիպրոսի մէջ: Պարմանու գաղթական գնահատած է պարմանուի հիին արդիւնքները եւ յոյս յայտնած, որ ան կրնայ միանալ հայաստանի լողաշալի հաւաքականին մօտիկ ապագային:

Ճատրակի աղջիկներու մրցաշարքին առաջին դիրքը գրաւեց Մարիամ Աւետիսեանը, երեանէն, որ ինը հանգրուան ետք շահեցաւ 8 կէտ: Իսկ տղոց մրցաշարքին յամառ պայքարէ ետք, առաջին երեք դիրքերը գրաւեցին Էտուարտ Սկրտչեանը, Արփոնեան, 7.5 կէտ, Դաիթ Տիրատուրեանը, Կիւմրի, 7.5 կէտ եւ Սարգիս Մանուկեանը, Երեան, 7.5 կէտ:

Պարմանուի աղջիկներու աւարտական մրցումին Լուս Անճելլոյ յաղթեց Կլենտլիին 84-70 հաշիւով եւ դարձան ախոյեան: Երեանի խումբը գրաւեց երրորդ դիրքը: Իսկ վոլիպոլի աղջիկներու աւարտական մրցումին Չայթ քաղաքի խումբը յաղթեց Երեանին 3-0 սեթերու հաշիւով եւ դարձաւ ախոյեան: Երրորդ դիրքը գրաւեցին Սիսիան քաղաքի աղջիկները:

Համահայկական Խաղերու փակման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Պելլուրթ ժամով ժամը 20:00-ին:

ՈՒՆՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ ԵՒ ՏՕՆ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԾԱԾՆԻ

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս հանդիսատար շուրջով պիտի Նշուի Ա. Աստուածածնի Վերափոխման տօնը եւ կատարուի Պիքֆայայի Ա. Աստուածածին վանքին ուխտագնացութիւնը:

Այս առիթով, ուխտատար հաւատացեալներուն կը ներկայացնենք Ուխտի Օրուան ժամանակացոյցը.-

Ուրբաթ 14 Օգոստոս
Աղի օրհնութիւն եւ ոչխարներու գնում, առաւօտեան ժամը 11.00-ին:
Աջահամբոյր, առաւօտեան ժամը 11.30-12.00:
Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:
Հսկում, երեկոյեան ժամը 7.00-ին:
Երգահանդէս, երեկոյեան ժամը 8.00-ին:

Շաբաթ 15 Օգոստոս
Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 7.00-ին:
Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:
Հանդիսատար Ա. եւ Աննահ Պատարագ, երեկոյեան ժամը 8.00-ին:

Պիտի պատարագ՝

ԳԵՐՇ. Տ. ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ
Առաջնորդ Ֆրանսայի Հայոց Թեմի

Արարողութեան պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր Հայրապետական պատգամը փոխանցէ՝

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Յընթացս Ա. եւ Աննահ Պատարագին, տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատուցի օրհնութիւն:

Կիրակի 16 Օգոստոս
Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ հանդիսատար Ա. եւ Աննահ Պատարագ:

Պիտի պատարագ եւ քարոզ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԱՐԶ. ԽԱԶՏԵՐԵԱՆ

Յաւարտ Ա. եւ Աննահ Պատարագի տեղի պիտի ունենայ խաղողօրհնէջի արարողութիւն:

Երկուշաբթի 17 Օգոստոս «Յիշատակ Մեռելոց»

Պիքֆայայի Ա. Աստուածածնի մատրան մէջ տեղի պիտի ունենայ Ա. եւ Աննահ Պատարագ եւ հոգեհանգիստ ազգիս համօրէն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ:

Կ Ա Ր Ե Ւ Ր

Անոնք որոնք կը փափաքին մատաղցու ոչխար կամ խաղող տուրիւն Ուխտի Օրուան առիթով, պէտք է ամենէն ուշը Ուրբաթ, 14 Օգոստոս 2015-ի կեսօրին, իրենց տուրները յանձնեն Անթիլիասի կամ Պիքֆայայի վանքը: Հեռ: Անթիլիաս 04-410001 - Պիքֆայա 04-983634:

Մ Ա Յ Ա Զ Դ

Տեր եւ Տիկին Լեւոն եւ Վերա Նազարեան
Տեր եւ Տիկին Արթիւր եւ Թամար Նազարեան
Տեր եւ Տիկին Յակոբ եւ Սոնիա Գրուշեան
Տեր եւ Տիկին Ռաֆֆի եւ Վիքա Գրուշեան
Տեր եւ Տիկին Կարի եւ Միշա Նազարեան
Տիարք Հայկ, Արթիւր եւ Ալեքսիա Լեւոն Նազարեաններ
Տիարք Ալեքս եւ Փիթր Արթիւր Նազարեաններ
Տեր եւ Տիկին Նուպար եւ Մարո Խանամիրեան
Ողբ. Տիկ. Անգինէ Յովնանեանի ընտանիք
Ողբ. Տիկ Ալիա Գասպարեանի ընտանիք
Ողբ. Տիար Վարուժ Խանամիրեանի ընտանիք
եւ համայն Նազարեան, Խանամիրեան, Յովնանեան, Գասպարեան, Գարակէօզեան, Գալայճեան, Պու Շտիտ ընտանիքներ կը գումար իրենց մօր, մեծ մօր, հորաքրոջ, մորաքրոջ եւ հարազատին

ԱՐԵՂԱԶ ՆԱԶԱՐԵԱՆԻ

(Շնեալ Խանամիրեան)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 12 Օգոստոս 2015ին, կէսօրէ ետք ժամը 3:30ին իր բնակարանին մէջ:

Յուղարկարողութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 14 Օգոստոս 2015ին, կէսօրէ ետք ժամը 3:30ին Սուրբ Նշան Մայր եկեղեցու մէջ, Չոքաք Էլ Պլաթ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրոնը Շաբթի Ազգային գերեզմանատուն:

Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
Յաւակցութիւնները կ'ընդունուին նախքան եւ յետ թաղման արարողութեան Սուրբ Նշան եկեղեցու «Կարպիս եւ Արեգ Նազարեան» սրահին մէջ, ժամը 11:00էն սկսեալ, իսկ Շաբաթ, 15 Օգոստոսին ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00 նոյն վայրին մէջ:

Շանթ. Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել եկեղեցու:

La Salderie DE LUNETTES
Lunettes Solaires et Médicales
1400 modèles à partir de 10\$
Autoroute Jdeideh - Tél. (01) 870016 - Prés Boghos Optic

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԻՊՈՎ ԱՂՈՔԻ ԵՒ ՊԱՍՏՈՒԾՈՒԹԵԱՆ ՆԱՐԷ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾՆԻ ՎԱՆՔ, ՊԻՔՖԱՅԱ 10-14 ՕԳՈՍՏՈՍ 2015

Հովանաւորութեամբ Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ կազմակերպութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Զրիստոնէական Դատարարութեան բաժանմունքին, 10-14 Օգոստոս 2015-ին, ամէն առաւօտ ժամը 10-ին, Պիքֆայայի Սուրբ Աստուածածնի վանքի մատրան մէջ տեղի պիտի ունենայ հոգեւոր խորհրդածութեան պահ, քարոզախօսութիւն, շարականի երգեցողութիւն եւ սաղմոսերգութիւն, Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով:


**ՀԵՏԵՒԻՆԸ ԶՐԻՍՏՈՒՄ՝ ԱՍՏՈՒԾԱՍՈՐ ՀԵՏԵՐՈՎ
ՇԱԹՈՒՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հինգշաբթի, 13 Օգոստոս 2015
**«ՀԱՅ ԵԿԵՐԵՏՈՑ ԱՂՈՔԵՆԵՐԸ
ԱՍՏՈՒԾԱՍՈՐ ԲԱՐԵՍՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ԽՆԴԻՆ»**
Հոգ. Տ. Թաթուլ Արղ. Գարտնաբեան

Ուրբաթ, 14 Օգոստոս 2015
**«ԱՍՏՈՒԾԱՍՈՐ ԱՆՁԸ
ՉԱՆԱՉԱՆ ԵԿԵՐԵՏԻՆԵՐՈՒ
ՎԱՐՈՎՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ»**
Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Տոնյեան

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի բարեպաշտ զաւակները մասնակից դառնալու հոգեպարար սոյն աղօթքներուն եւ խորհրդածական պահերուն, լեցուելու հայ եկեղեցույ կրօնական ապրումներով եւ Աստուածամօր մայրութեան նուիրական օրհնակով:
ՇԱՆՕԹ. Մասնակցիլ փափաքողներուն համար փոխադրակաքեր պիտի տրամադրուին ամէն օր, առաւօտեան ժամը 8:30-ին Սուրբ Աստուածածնի եւ Սրբոց Վարդանանց եկեղեցիներու մուտքին, տպարան Տօնիկեանի մօտ, Տորայի մայրուղիի վրայ գտնուող Մերստես ընկերութեան մօտ եւ Անթիլիասի Մայրավանքին դիմաց:

ՀԱՅՎԱԿԱՆ ԱՆՅԵԱԼԵՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՅՍՈՐ ԱՉԱՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ



Մեր թուականն է 72 տարիներ առաջ՝ 1943ին, Երեւանի մէջ ծնած է դերասան եւ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արուեստագետ Ազատ Գասպարեան:
Ա. Գասպարեան 1969ին աւարտած է Երեւանի գեղարուեստա-թատերական ինստիտուտի դերասանական բաժինը: 1963-1965ին որպէս դերասան մաս կազմած է Երեւանի Տիկնիկային թատրոնին, 1969-1971ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնին, 1971-1979ին Երեւանի Գ. Սուրդուկեանի անուան թատրոնին, իսկ 1979էն մինչեւ իր մահը եղած է հեռուստաթատրոնի դերասան:
Ա. Գասպարեան թատրոնի կողքին դերեր ստանձնած է նաեւ բազմաթիւ ֆիլմերու մէջ, որոնցմէ են «Հեղահար Աղբիւր»՝ Գեղամի դերով, «Համագիւղացիներ»՝ վարորդի դերով, «Շերունին եւ Արեւը»՝ ուսուցիչի դերով եւ այլն:
Ա. Գասպարեան 2005ին արժանացած է Երեւանի պատուաւոր քաղաքացի, իսկ 2010ին Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արուեստագետ կոչումներուն: 2010ին տիրացած է Ուիլիամ Սարգսեանի եւ Մովսէս Խորենացիի անուան մետալներուն ու դարձած Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր:
Մահացած է Երեւան 2 Օգոստոս 2013ին:

Յայտարարութիւն

Հայոց Յեղասպանութեան Որբերու, Արամ Պեզիբեան Թանգարանի Տնօրէնութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ որ թանգարանը, որուն բացումը տեղի ունեցաւ Յուլիս 18-ին, հայ եւ օտար բարձրաստիճան կրօնական եւ քաղաքական ներկայացուցիչներու եւ ազգայիններու ներկայութեան, այցելուներ կ'ընդունուի ամէն օր բաց երկուշաբթի օրերէն առաւօտ ժամը 10:00-էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00, ժայլկ:

Փոքրիկները նախընտրաբար այցելել իրենց ծնողներու ընկերակցութեամբ:

Տնօրէնութիւն

Ընդհանուր Գիտելիք

ԶԱՆԼԻԿՆԵՐՈՒ ՕՐ

Օգոստոս 13ը ծախիկներու միջազգային օրն է: Վիճակագրական տուեալներով աշխարհի բնակչութեան տասը առ հարիւրը ծախիկներ են: Զախիկներու միջազգային օրուայ նշման նպատակն է՝ միջազգային հանրութեան ուշադրութիւնը ծախիկներու վրայ դարձնել, օգտակար դառնալու համար անոնց դժուարութիւններունը օրինակ աշխի մեծամասնութեան համար նախագծուած եւ արտադրուած իրերն ու գործիքները երբ ծախիկներ կը փորձեն գործածել, ակամայ կը ստիպուին կատարել իրենց համար անբնական շարժումներ, որոնց պատճառով կ'ենթարկուին մկանային եւ ջղային դրութեան որոշակի քայքայման: 1991ին Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ կատարուած հետազոտութեան համաձայն՝ արտադրական մահացու դեպքերը աւելի յաճախ են ծախիկներու մօտ:

Ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, որ ճարտարապետներու, արուեստի գործիչներու, երաժիշտներու եւ մաթեմատիկոսներու մէջ ծախիկներու թիւը սպասուածէն աւելի է: Ուսումնասիրութեան համաձայն ծախիկներու գերակշռող մասը տղամարդիկն են քան կիները: Զախիկները աւելի ենթակա կ'ըլլան արուեստագետի, նկարիչի եւ գրողի մասնագիտութեամբ օժտուելու: Անոնք առաւելաբար յաջող կ'ըլլան սուսերամարտի մէջ:

Մ Ա Յ Ա Զ Դ

Վարդուհի Բէշիշեան - Գոճայեան (1947-2015)

Սրտի խոր կակիծով կը գումարէ մահը մեր շատ սիրելի տիկնոջ, մօր, մեծմօր, քրոջ, հորաքրոջ, ազգակալին եւ հարազատին՝ Վարդուհի Բէշիշեան - Գոճայեանի, որ պատահեցաւ Կիրակի, 9 Օգոստոս 2015ի առաւօտեան, յետ կարճատեւ հիւանդութեան:
Հանգուցեալին յուղարկարութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 14 Օգոստոս 2015-ին, կ.ե. ժամը 2:30ին, Ա.Պետրոս Հայոց Առաք. Եկեղեցու մէջ՝ Վեն Նայգ, որմէ ետք հանգուցեալին մարմինը պիտի ամփոփուի Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան մէջ:
Սգակիներն են.
Ամուսինը՝ Տիար Գառնիկ Գոճայեան
Որդին՝ Տիար Արա Գոճայեան
Դուստրը՝ Տեր եւ Տիկին Հրայ Եւ Մարալ Պէյլերեան եւ դուստրերը՝ Սեւան եւ Վիվիան
Եղբայրները՝ Տեր եւ Տիկին Սանուել եւ Ռոզին Բէշիշեան
Տեր եւ Տիկին Հրայ Եւ Սիլվա Բէշիշեան
Տեր եւ Տիկին Յովնանեան եւ Արփի Բէշիշեան
Եղբոր զաւակները՝ Տեր եւ Տիկին Ներսէս եւ Գլոսիա Աւետիքեան եւ զաւակունք
Տեր եւ Տիկին Յովիկ եւ Թամար Ախոյեան եւ զաւակունք
Տեր եւ Տիկին Խաժակ եւ Թալին Բէշիշեան եւ զաւակը
Օրիորդ Յուլիա Բէշիշեան
Ինչպէս նաեւ համայն Գոճայեան, Բէշիշեան, Օհանեան, Պէյլերեան, Այարեան, Շաար, Իսկենտերեան, Գալայճեան, Սորոյեան եւ ճեմճեմեան ընտանիքներ:
Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Հ.Բ.Շ. Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանին կամ City of Hopeին:



ՑԱԽԱԿՅԱԳԻՐ

Թերթիս ատենի վաստակաւոր աշխատակից, Լիբանանեան պետական ռատիոկայանի հայկական ռատիոժամի առաջին խօսնակուհի, Հայ բեմի նուիրեալ եւ Լուս Անճելոսի ԴԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան երկարամեայ քարտուղարուհի՝ Ընկերուհի Վարդուհի Բէշիշեան - Գոճայեանի մահուան տխուր առիթով, «Չարթօն» խորագրով կը ցաւակցի ողբացեալին ընտանեկան պարագաներուն եւ ՌՎԿի ու ԴԲԸՄի մեծ ընտանիքին:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Թ

Տեր եւ Տիկ. Հրայր եւ Վանտա Գաֆէսեաններ իրենց հոր՝ Կարապետ Չինչիլեանի (Չահիլ) եւ հորաքրոջ՝ Մարի Ղազարեանի (Հալեպ) մահուան տխուր առթերով, շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք այլ միջոցներով մասնակից դարձան իրենց սուգին եւ առ այդ կը նուիրեն՝
«Չարթօն» օրաթերթին 100,000 լ.ն.
Հ.Բ.Շ. Միութեան 100,000 լ.ն.:

Պաշտօնը ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատարմութեամբ բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Գոճայեանի թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորտը վրիպակներու պարագային, կ'ապաւինին յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: